ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

4 ՀՈՒՆՎԱՐԻ
2025 թ.
№ 1 (1138)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

«Բանակը ազգի ինքնաճանաչման հայելին է»

«Բանակը ազգի ինքնաճանաչման հայելին է, բոլոր հայերի ծնունդն է, հայության հավաքական կերպարն է, նրա պատասխանատվությունը, նրա պատմության վերագնահատումը և հայացքը ապագային»:

Վազգեն ՍԱՐԳՍՅԱՆ

Հայոց բանակը 33 տարեկան է: Հայոց բանակի ստեղծման հիմքը դարձավ 1992 թվականի հունվարի 28-ի պատմական որոշումը «Հայաստանի Հանրապետության պաշտպանության վերաբերյալ»:

Այդ բանակը բազում փորձություններ հաղթահարեց, նաև հաղթանակներ կերտեց, որոնք, ցավոք, ձեռք բերվեցին նաև բազում հերոսների արյան գնով:

«Բանակի տարին չի սկսվում և չի ավարտվում: Այնպես, ինչպես չի սկսվում ու չի ավարտվում հայրենասիրությունը: Այս անգամ կասեմ՝ բանակի տարին բաղկացած է 365-366 անկրկնելի և գեղեցիկ օրերից: Բանակի յուրաքանչյուր օրը ծնունդ է: Օրը ծնվում է՝ իր հետ բերելով իր գեղեցկությունը, իր հոգսը, իր տագնապը». Վազգեն Սարգսյանի տողերն են: Նա կայացրեց բանակը, նա շունչ ու ոգի տվեց հայոց բանակին, նրանով ոգեշնչվեցին հայ մարտիկները՝ կամավորից մինչև մահապարտ:

«Մենք ապրում ենք մի այնպիսի անկանխատեսելի տարածաշրջանում, ուր «դատապարտված ենք» ուժեղ բանակ ունենալու: Այս գիտակցությունը պետք է համապետական մոտեցում ձևավորի բանակի և սպայակազմի նկատմամբ: Հայոց բանակի սպան պետք է ամենաարտոնյալ խավը լինի հանրապետությունում: Դա ոչ այնքան սպային է պետք, որքան հասարակությանը: Նույն կարգով ՀՀ բանակում ծառայած զինվորի ընտանիքը պետք է տարբերակվի ծառայությունից խուսափած մարդու ընտանիքից: Ժամանակին այս երկրին իր կյանքը, ջիղը, արյունը տված տղամարդը պետք է տարբերվի մյուսներից»,- երիցս իրավացի էր սպարապետը:

Մեր պատմության մեջ կան և՛ հերոսական, և՛ ողբերգական էջեր, վերելքներ ու անկումներ, որոնք նստած են մեր արյան մեջ և հուշում-հորդորում են՝ պետք է ունենալ հզոր բանակ. դա է մեր անվտանգության ու խաղաղության երաշխիքը: Մեր Հայրենիքի հենասյունը հզոր բանակն է: Յուրաքանչյուր հայ մարդ իր հոգուց պետք է մի մասնիկ տա բանակի հզորացման գործին:

Շնորհավո՜ր տոնդ, հայ զինվոր, շնորհավո՜ր, սահմանին կանգնած հայ քաջորդի:

Մեր խոնարհումը հերոսածին մայրերին, մեր խոնարհումը հանուն գալիք օրվա իրենց կյանքը զոհաբերած հերոսների շիրիմներին:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ, ՀԱՅՈՑ ԵՐԿԻՐ, ՀԱՅՈՑ ՀՈՂ

Հայո՜ց աշխարհ, հայո՛ց երկիր, հայո՛ց հող,
Լայն աշխարհում քո գրկի մե՜ջ ապրեմ թող:
Դու ժայռակուռ մի ամրոց ես հնավանդ,
Աշտարակներդ՝ Արագած ու Արարատ:
Թող ես լինեմ աշտարակիդ աղավնին,
Շուքդ մնա իմ ապավեն հովանին:
Ո՛ւր էլ թռչեմ, ինչ աշխա՜րհ էլ թափառեմ,
Նորից ե՛տ գամ, քո տանիքո՜ւմ ծվարեմ:
Ու թե մեռնեմ, քո գրկի մե՛ջ մեռնեմ թող,
Հայո՜ց աշխարհ, հայո՛ց երկիր, հայո՜ց հող:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

...Դեռ մխալու է վերքը նահրյան...
Ու վերքի միջից թռած՝ թռչելու
Ու կանչելու է երգը նահրյան:
Երգի թևի տակ խաղաղ շնչելու,
Կանաչելու է հերկը նահրյան:
Եվ գգվելու է հասկերը նրա
Մեր երազները քարերի վրա
Ասեղնագործող չեռքը նահրյան:
Դեռ մխալու է վերքը նահրյան...
Առաքելու է, ինչ էլ որ լինի,
Իր ծուխն առ երկինք երդը նահրյան
Եվ ոչ մի օրով աշխարհի երթից
Հետ չի մնալու երթը նահրյան:
Ինչ հողմ ու հրդեհ, հրթիռ ու հյուլե,
Ամուր է հոգու բերդը նահրյան:
Բայց ո՞րն է, ասեք, մեղքը նահրյան,
Որ մխալու է վերքը նահրյան:

Կա մի բան, որ աշխարհի զանազան ծայրերից կարող է միավորել հայերին հոգով, մտքով և արյունով, այն է՝ ազգային սերը:

ՐԱՖՖԻ

Առցանց աշխատաժողով՝ «Ճախմատ. գիտություն և կրթություն» խորագրով

ՀՊՄՀ-ի և «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի նախաձեռնությամբ հունվարի 18-ին անցկացվեց «Շախմատ. գիտություն և կրթություն» խորագրով առցանց աշխատաժողով, որի նպատակն էր ստեղծել գիտելիքների և փորձի փոխանակման հարթակ՝ նորարարական մոտեցումների ներդրման, մասնագիտական հմտությունների զարգացման և ներառական ու արդյունավետ ուսուցման խթանման համար:

Աշխատաժողովին մասնակցում էր առարկան դասավանդող 300-ից ավելի ուսուցիչ հանրապետության բոլոր դպրոցներից:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը ողջունեց, արդյունավետ աշխատանք ու հետաքրքիր երկխոսություններ մաղթեց աշխատաժողովի մասնակիցներին և հույս հայտնեց, որ հարթակը կբավարարի ուսուցիչների սպասումները:

«Շախմատը ոչ միայն խաղ է, այլև կարևորագույն կրթական գործիք, որը ձևավորում է սովորողների մտածողության ոճը, նախաձեռնողականությունը, որոշումներ ընդունելու կարողությունը, ստեղծարարությունը և հոգեբանական այլ կարևորագույն որակներ: Աշխատաժողովի նպատակն է կարևորել մեր երկրի բոլոր դպրոցների ուսուցիչների շախմատային կրթության մեթոդաբանության նորագույն, ինչպես նաև կյանքի հմտությունների զարգացմանը և համընդհանուր ներառականության համատեքստում՝ անձի առանձնահատուկ պայմաններին վերաբերող հարցերի քննարկումը»,-նշեց ռեկ- ➤2

Առցանց աշխատաժողով՝ «Շախմատ. գիտություն և կրթություն» խորագրով

➢1 տորն ու հույս հայտնեց, որ յուրաքանչյուր մասնակից անձնային և մասնագիտական որակների զարգացման համատեքստում իր ասելիքն ու ներդրումը կունենա աշխատաժողովում:

ՀՊՄՀ «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի աշխատակից, կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանը ևս ողջունեց գիտաժողովի մասնակիցներին և նկատեց, որ 14 տարի դասավանդվող առարկայի վերաբերյալ «Շախմատ» ինստիտուտի աշխատանքի շնորհիվ մեծ փորձ է կուտակվել: Նա կարևորեց նաև այն հանգամանքը, որ առարկան իր շուրջն է համախմբել մի խումբ մասնագետների և ուսումնասիրվում է գիտական մակարդակում: Կրթության փորձագետը շնորհակալություն հայտնեց շախմատի ուսուցիչներին. դժվար է դասավանդել նոր առարկան մեր օրերում, երբ աշխարհում առհասարակ դասավանդելը համարվում է ամենադժվար, բայցև ամենապատվաբեր աշխատանքը:

«Կարևորում ենք երկխոսությունը առարկայի տեսական մասը մշակողների և այն դասավանդողների միջև. սա արդյունավետության գրավականներից մեկն է, որ տարիներ շարունակ իրագործվում է Ինստիտուտի և Շախմատի ակադեմիայի նախաձեռնությամբ»,-նշեց Սերոբ Խաչատրյանն ու աշխատաժողովի զեկուցողների անունից վստահեցրեց՝ այսօր էլ պատրաստակամ են պատասխանել առարկան դասավանդողների՝ առցանց ուղարկված հարցերին:



Աշխատաժողովը շարունակվեց չորս մասնաճյուղերում՝ Շախմատի ուսուցման մեթոդական հարցեր, Շախմատը և կյանքի հմտությունները, Ուսուցչի անձնային և մասնագիտական զարգացում, ԿԱՊԿ ունեցող սովորողների առանձնահատկությունները և ուսուցիչների մանկավարժական կարողունակությունների զարգացման միջոցները ներառական կրթության համակարգում: «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատողներն իրենց զեկույցներում անդրադարձան մասնաճյուղերի թեմաների շրջանակներում կարևորագույն հարցերին և վերջին հետազոտություններին:

Աշխատաժողովի ընթացքում ուսուցիչներն առցանց ձևաչափով ուղարկեցին առարկայի դասավանդման վերաբերյալ հարցեր՝ դասագրքերից մինչև ակնկալվող վերջնարդյունքների գնահատում և այլն. դրանք մեթոդիստները, չափորոշիչների հեղինակները, գիտաշխատողները քննարկեցին համապատասխան մասնաճյուղերում: Աշխատաժողովի մասնակիցների կարծիքով՝ ձեռնարկն արդյունավետ հարթակ էր շախմատի ուսուցման, գնահատման և առարկայի հետ կապված մի շարք հարցեր մասնագետներին ուղղելու, նպատակային և արդյունավետ քննարկում ունենալու համար:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

«Կարիերայի ուղղորդումը՝ պետության կայուն ապագայի ձևավորման հիմքում»

ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը մասնակցեց Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կազմակերպած միջոցառմանը:

Հիշեցնենք՝ հանրակրթության նոր չափորոշչի ներդրման շրջանակում, դպրոցների 8-րդ դասարաններում գործում են մասնագիտական կողմնորոշման խմբակներ, որոնք ներդրվել են 2024-2025 ուսումնական տարվանից:

Ողջույնի խոսքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը կարևորեց այն, որ մասնագիտական կողմնորոշման աշխատանքները սկսվում են հենց հիմնական դպրոցից, ինչը, ըստ նրա, բազմաթիվ խնդիրների լուծման նախապայման է: Ըստ նրա՝ այս տարի միջին մասնագիտական կրթության նկատմամբ հետաքրքրության աճ է գրանցվել. իրականացվում են բազմաթիվ ծրագրեր, այդ թվում՝ պետության համար գերակա համարվող մասնագիտությունների գծով բարձր կրթաթոշակի տրամադրմամբ:

Արաքսիա Սվաջյանն անդրադարձավ նաև ավագ դպրոցներում կրթության կազմակերպմանը, խոսեց ցկյանս կրթության համակարգի և խորհրդատվական ծառայությունների, ճիշտ ուղղորդման մեխանիզմների կարևորության մասին:

Պանելային քննարկման բանախոսները հնչեցրին կարիերայի ուղղորդման գործընթացների վերաբերյալ իրենց տեսակետները, անդրադարձան առկա մարտահրավերներին և ոլորտի զարգացման հնարավորություններին:

ՀՊՄՀ պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը ասաց, որ ՀՊՄՀ-ում շարունակվում է մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման գործընթացը: Մասնավորապես՝ մասնագրերում վերափոխվում են փոխանցելի կրթական ելքային արդյունքները, դրանք համապատասխանեցվում են ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին:

Նրա դիտարկմամբ՝ մասնագիտական գիտելիքներից, կարողունակություններից բացի, աշխատաշուկայում հաջողելու կարևոր նախապայման է փափուկ հմտությունների ձեռքբերումը. «Ավելի հաճախ զբաղվածության խնդիրը հնարավոր չի լինում լուծել այդ հմտությունների բացակայության պատճառով. ունենալով գիտելիքներ, սխալ է կառուցվում աշխատանքային գործունեության խնդիրը լուծելուն միտված քայլերը»:

Լինելով մանկավարժներ կրթող կառույց՝ Մանկավարժական համալսարանը, պատրաստ է ներկայացնել իր փորձառությունը. բուհը, մասնագիտական կողմնորոշման գործընթացում առկա համագործակցությունների ամրապնդման և ոլորտի հետագա զարգացման համար պատրաստ է շարունակել գործընկերությունը տարբեր գերատեսչությունների հետ, իրականացնել վերապատրաստումներ և այլ նախաձեռնություններ՝ վստահեցրեց՝ Մարիաննա Հարությունյանը:

PROVE նախագծի շրջանակում

Էրազմուս+ բարձրագույն կրթության կարողությունների զարգացման «Արժեքներին միտված կրթության խթանումը Հարավային Կովկասի բուհերում» PROVE նախագծի շրջանակում ՀՊՄՀ-ում տեղի ունեցավ ֆոկուս խմբի քննարկում, որին մասնակցում էին ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային համագործակցության հարցերով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը, դասախոսներ, ուսանողներ, ՀԿ ներկայացուցիչներ, ուսուցիչներ, ծնողներ:

Եռամյա ծրագրի համակարգողը Վրաստանի Թելավիի պետական համալսարանն է: Նախագծի հիմնական նպատակը ՀՀ և տարածաշրջանային բուհերում արժեքներին և գիտելիքին միտված կրթության (VaKe) զարգացումն է: Կարիքների գնահատման նպատակով կիրականացվի քանական և որակական հետազոտություն, կվերհանվեն դասավանդման և ուսումնառության ընթացքում դասավանդողների կիրառող մեթոդները, մոտեցումների հիմնական խնդիրները:

Այդ կարիքների բացահայտմանն ու գնահատմանն էր միտված ֆոկուս խմբի հետ քննարկումը, որը վարում էին Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Մարինե Մաթոսյանն ու Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Մարիանա Ավետիսյանը:

Հանդիպմանը ներկայացվեց ծրագրի նպատակը, քննարկվեցին կրթության մեջ արժեքների դերը, խոչընդոտները, եղան բարելավմանը միտված առաջարկներ:

Մեռնում են ա՛յն մարդիկ եւ ա՛յն ժողովուրդները, որոնք իրենց անկումը ընդունում են իբրեւ ճակատագրական, իբրեւ պարտադրուած մի ֆատում: Նրանք՝ որոնք կարողութիւնը չունեն ինքնզինքին ոչ ասել, մերժել իրենց աղաւաղուած գոյութեան ձեւը եւ կերպը, իրենց մթագնած կամքի եւ գիտակցութեան խղճալի վիճակը: Նրանք՝ որ չգիտեն խարազանել իրենց սիրտը եւ մարմինը, չգիտեն յանդգնել եվ իրենց յանդգնութեան պատրանքը մսի եւ ոսկորի վերածել:

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

Սառա Մանթվիլի դասախոսությունը

Մանկավարժական համալսարանում էր Շվեյցարիայի Լյուցեռնի համալսարանից Սառա Մանթվիլը: Բժշկական գիտությունների թեկնածու Սառա Մանթվիլը առաջին անգամ է Հայաստանում: Հունվարի 17-ին համալսարանում բժշկական ոլորտի տարբեր մասնագետների հետ հանդիպմանը նա խոսեց վարժունակ առողջապահական համակարգերի մասին՝ համգամանորեն անդրադառնալով հետազոտական աշխատանքի արդյունքում ստեղծված գիտելիքները կլինիկական աշխատանքում կիրառելուն:

Դասընթացը նախատեսված էր մասնակիցներին հիմնական գիտելիքներ տալու առողջապահական համա-

կարգերի գիտելիքների յուրացման (ԱՀԳՅ) վերաբերյալ և ցույց տալու, թե ինչպես դրանք կարող են նպաստել առողջապահական ծառայությունների մատուցման և արդյունքների բարելավմանը: ԱՀԳՅ-ն միավորում է իրական ժամանակում տվյալների հավաքագրումը, ապացուցահեն որոշումների ընդունումը և շահառուների համագործակցությունը՝ ստեղծելով ճկուն առողջապահական համակարգեր:

Ծանոթանալով լսարանում ներկա ոլորտի տարբեր մասնագետների հետ՝ Սառա Մանթվիլը կարևորեց համագործակցությունը և մանրամասնեց, թե այդ տիրույթում ինչպես կարելի է համագործակցել ստեղծած գիտելիքները յուրացնելու և կիրառելու համար:

Բանախոսը ներկայացավ որպես վարժունակ առողջապահական համակարգերի մասնագետ, ով չունի վերականգնողական աշխատանքի փորձառություն, բայց վերականգնողական աշխատանքի ոլորտում շատ գործընկերներ ունի, որոնք հորդորել են գալ Հայաստան և Մանկավարժական համալսարանում խոսել վարժունակ առողջա-

պահական կամ առողջապահական համակարգերի գիտելիքների յուրացման մասին: Սառա Մանթվիլը հանդես եկավ դասախոսությամբ առողջապահական համակարգերի գիտելիքների յուրացման մասին՝ ԱՀԳՅ գործընթացից ստացված գիտելիքները ինչպես կարելի է վերածել քաղաքականության և իրականացնել համակարգային փոփոխություններ:

Նա երկար տարիներ աշխատանք է տարել վարժունակ առողջապահական համակարգերի ոլորտում՝ ուղղված մասնակցային մեթոդների խթանմանը:

Նա ներկաներին ծանոթացրեց առողջապահական համակարգերի գիտելիքների յուրացման սկզբունքների հետ, խոսեց տվյալահեն ուսուցման, հետագա կապի փուլերի և շարունակական կատարելագործման մասին: Միաժամանակ մասնագետներից տեղեկացավ՝ ինչպես են նրանք այդ սկզբունքները կիրառում կամ կարող են կիրառել իրենց աշխատանքում արդյունքների բարելավման նպատակով:

Երկօրյա աշխատաժողովի ընթացքում մասնակիցները ծանոթացան ԱՀԳՅ սկզբունքներին, մեթոդաբանությանը և դրանց կիրառումներին:

Բանախոսն անդրադարձավ առողջ ծերացման վերականգնողական հիմնական մարտահրավերների սահմանմանը. ԱՀԳՅ շրջանակի կիրառում տվյալներում, գործողություններում և գնահատման կարիքներում: Այնուհետև անդրադարձան հաջորդ փուլին՝ շահառուների քարտեզագրմանը՝ դերերին և հնարավոր մարտահրավերներին:

Երկրորդ օրը խոսեցին խոչընդոտների, հնարավորությունների և ԱՀԳՅ-ում կայունության մասին, կատարեցին մարտահրավերների վերլուծություն և գործողությունների նախագծում:

Վերջում մասնագետներն ամփոփեցին, վերլուծեցին հաջորդական քայլերը, անդրադարձ արեցին իրենց ուսումնական փորձին, ամփոփեցին գաղափարները և ի մի բերեցին՝ ինչպես ԱՀԳՅ համակարգերը կիրառեն գործնականում:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության համաժողովում

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության (ՀՈՒՄԸ) հրավերով 2025 թվականի հունվարի 9-11-ը Ժնևի և Լոզանի համալսարաններում մասնակցել է ընկերակցության 16-րդ Ընդհանուր համաժողովին, որի ընթացքում հանդես է եկել «Արցախը Խորհրդային Ադրբեջանի» բռնակցելու խնդրի արծարծումը սփյուռքահայ մամուլում (1920-1930-ական թթ.)» վերտառությամբ զեկուցումով:

Զեկույցի հիմնական շեշտադրումն այն է եղել, որ պետք չէր հաշտվել Արցախի բռնակցման հետ: Եվ սփյուռքահայ մամուլը պայքարի առաջնագծում էր: Անհրաժեշտ էր բողոքել անարդարության դեմ, չհիասթափվել և շարունակել պայքարը: Սերունդներին տրամադրել հաղթանակի և արդարության վերականգնման համար պայքարի: Որովհետև առանց հաղթանակի չի լինի ոչ մի առաջընթաց, ապահովություն, խաղաղություն: Անարդարության դեմ պայքարը, ի վերջո, պայքար է նաև հանուն ապագայի:

Համաժողովի ընթացքում ՀՈՒՄԸ-ը կարևորել է Մանկավարժական համալսարանի ներկայացուցչի մասնակցությունն իրենց համաժողովին և հույս հայտնել, որ հետագայում համագործակցությունն ավելի ընդգրկուն կդառնա:

«Դասախոսական գավաթ-2025»

Հունվարի 27-31-ը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիայի նախաձեռնությամբ անցկացվեցին «Դասախոսական գավաթ-2025» 13-րդ միջբուհական մարզական խաղերը: ՀՊՏՀ-ում անցկացված մրցաշարը նվիրված էր բուհի հիմնադրման 50-ամյակին:

Այս տարի առաջնությունն անցկացվեց 6 մարզաձևում՝ հրաձգություն, սեղանի թենիս, շախմատ, բասկետբոլային նետումներ, բադմինտոն, պարանի ձգում: Մրցումներին մասնակցեցին հայաստանյան 10 բուհի շուրջ 200 դասախոս և աշխատակից:

Ամենամյա միջբուհական խաղերին Մանկավարժական համալսարանն ունենում է ակտիվ մասնակցություն, բայց այս տարի բուհը մրցումներին ներկայացավ միայն հրաձգություն մարզաձևում: Թիմի կազմում էին Շախմատի և սպորտի ամբիոնի դասախոս Իվան Կարապետյանը, Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ Վահագն Խառատյանը: Վերջիններս խոցելով 50 հնարավորից 45-ական՝ միավորներով առաջ անցան մրցակիցներից և տղաների անհատական պայքարում զբաղեցրին հետևյալ տեղերը՝ Իվան Կարապետյանը՝ 1-ին, իսկ Վահագն Խառատյանը՝ 2-րդ հորիզոնականը: Վերջիններս արժանացան մեդալների և պատվոգրերի: Նշենք, որ նախորդ տարիներին ևս այս և այլ մարզաձևերում աբովյանականները ճանաչվել են լավագույնները, զբաղեցրել բարձր հորիզոնականներ:

«ԿԻՆՈՆ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑ Է՝ ՊԱՏՄԵԼՈՒ ԻՄ ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»,- ասում է Հարությունը ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Մեր պաշտոնաթերթի հյուրն է Հայաստանի կինոգործիչների միության նախագահ, ՀՀ ժողովրդական արտիստ, Եվրոպական կինոակադեմիայի անդամ, «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի հիմնադիր, միջազգային բազմաթիվ մրցանակների դափնեկիր, կինոռեժիսոր, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ շրջանավարտ Հարություն Ռուբենի Խաչատրյանը:

-Հոբելյանական տարին ամփոփելիս ի՞նչ կարևոր եզրահանգումներ արեցիք: Հետադարձ հայացք գցելով 70-ամյա անցյալին՝ ի՞նչ հիշողություններ են արթնանում:

-Իրականացնելու շատ գործեր կան, նաև կիսատ մնացած ծրագրեր, եզրահանգումներ անելու ժամանակ չկա: Որևէ ծրագրի ավարտին վերլուծություններ անում եմ, բայց ոչ եզրահանգումներ: Աշխատանք շատ կա, սցենարներ կան, որոնցով ֆիլմեր պիտի նկարահանվեն, նոր կինոդպրոց պետք է կառուցվի...

-Ե՞րբ առաջացավ սերը կինոյի հանդեպ. Մանկավարժականի Կուլտուրայի ֆակուլտետի՞ց, երբ ավարտեցիք Յուրի Երզնկյանի արվեստանոցը, թե՞ ավելի վաղ... Կանդրադառնա՞ք Ձեզ համար բախտորոշ այդ տարիներին:

-Մի քիչ դժվար է կինոյի հանդեպ հետաքրքրությունը «սեր» անվանել... Բավականին դժվար գործ է կինո նկարելը, ծանր աշխատանք: Մեր տանը մի ընտանիք էր վարձով ապրում, և տան տղամարդը՝ Հրաչը, կինոմեխանիկ էր: Նա Ջավախքի գյուղերում ֆիլմեր էր ցույց տալիս: Խնդրեցի, որ ինձ աշակերտ վերցնի և նրա հետ ամեն շաբաթ, կիրակի մեկնում էինք լեռնային գյուղերը և 8-10 գյուղերում ցուցադրում էինք վարձով վերցրած այդ ֆիլմերը: Հետո նույն ֆիլմերը նայելը դարձավ ձանձրալի: Ես սկսեցի զբաղվել մոնտաժով:

Հետո հետաքրքրվեցի արվեստի և գրականության, հատկապես կինոյի պատմությամբ, գրքեր կարդացի, և հետաքրքրություն առաջացավ դեպի ռեժիսորները, դեպի այն մարդիկ, որոնց մասին ասում են՝ հետաքրքիր մտածողություն ունեն, որոնք տեսնում են լույսը...

16 տարեկանում ավարտեցի Ջավախքի (Ախալքալաքի) Հովհաննես Թումանյանի անվան դպրոցը և եկա Երևան՝ ռեժիսուրայի բաժին ընդունվելու ակնկալիքով: Զարմանքս մեծ եղավ, երբ իմացա, որ թատերականում չկա ռեժիսուրայի բաժին:

7 տարի չկարողացա ընդունվել բուհ: Թատերական ինստիտուտում ինձ կտրուկ մերժեցին՝ ասելով, որ արագ եմ խոսում և Ախալքալաքի նկատելի առոգանությամբ:

-Եվ դիմեցիք Մանկավարժական ինստիտուտ:

-Այո, դիմեցի Մանկավարժական ինստիտուտ: Իսկապես ես լավ չէի խոսում. ես շատ արագ եմ խոսում և շատ արագ մտածում, կարծում էի ռեժիսորի համար այդքան էլ կարևոր չէ սահուն ու գեղեցիկ խոսելը...

Մեկնեցի Մոսկվա, բայց շուտով հասկացա, որ այնտեղ ապրելը թանկ է, և որ ВГИК-ը իմ բանը չէ: Վերադարձա, մեկնեցի բանակ, որից հետո ամուսնացա, և ծնվեց տղաս: Աշխատանքի անցա էլեկտրոնային հաշվիչ մեքենաների նախագծային ինստիտուտում:

Բայց կինս հորդորեց մեկ անգամ էլ դիմել Մանկավարժական ինստիտուտ: Ես որոշեցի դիմել ֆակուլտետում նոր-նոր բացված կինոռեժիսուրայի բաժին: Դա 1977 թվականն էր: 1-ին կուրսը հավաքում էր Յուրի Երզնկյանը, այստեղ դասավանդում էին Ալբերտ Յավուրյանը, Միքայել Ստամբոլցյանը:

Մեծ դժվարությամբ ընդունվեցի, որովհետև շատ հայտնի ու ճանաչված արվեստագետների երեխաներ էին դիմել: Հենց սկզբից ասացին, որ մրցույթից դուրս 3 հոգու են ընդունել, և առաջին իսկ քննաշրջանի ընթացքում պետք է դուրս մնացողներ լինեն:

Շուտով ես դարձա Լենինյան թոշակառու, կարմիր դիպլոմով ավարտեցի ինստիտուտը: Ավարտական դիպլոմային աշխատանքս վերնագրել էի «Մեր թաղի ձայները», որը Կոնդում միայնակ ապրող մի երաժիշտ Հովիկ Անդրեասյանի մասին էր:

Ես վավերագրական ֆիլմեր էի սիրում նկարել, որովհետև շատերը պնդում էին, որ ես վատ եմ խոսում, դերասանները չեն հասկանա: Խաղարկային կինոն ինձ բավականին թատերական ու կեղծ էր թվում: Ինձ համար ավելի շատ հետաքրքիր էր դոկումենտալ ֆիլմը:

Եվ այսպես ավարտեցի ինստիտուտը և սկսեցի աշխատել «Հայֆիլմ» կինոստուդիայում: Այստեղ էլ տարիներով պետք է սպասեիր, որ հնարավորություն տան դեբյուտային ֆիլմ նկարել: Մի քանի ֆիլմ նկարեցի, որոնք ոչ շատ լավն էին, ոչ էլ շատ վատը: Բայց երբ նկարեցի իմ ամենալավ ֆիլմերից մեկը՝ «Կոնդը»՝ մեծ դիմադրության արժանացա. «Հայֆիլմ»-ի 12 հոգանոց խումբը իմ ֆիլմը որակեց թույլ, սիրողական, անհետաքրքիր, հակասովետական, մինչև անգամ՝ հակահայկական…

-Ուկրաինայում կազմակերպված երիտասարդական կինոփառատոնը բեկումնային եղավ Ձեր ստեղծագործական կյանքում...

- Այո: Օպերատորի հետ ֆիլմը դուրս բերեցինք լաբորատորիայի նկուղից, ներկայացրինք մրցույթին, և ֆիլմը Կիևում ստացավ գլխավոր մրցանակ: Այնուհետև գլխավոր մրցանակներ Մոսկվայում, Թբիլիսիում, Սվերդլովսկում: Հետագայում ինձ հրավիրեցին Մյունխեն, Նյու Յորք, որտեղ ստացա միջազգային մրցանակներ:

Մոսկվայի 1-ին հեռուստաալիքը հաղորդումներ էր պատրաստում լավագույն ֆիլմերի մասին: Եվ այդ հաղորդումներից մեկը նվիրեցին մեզ՝ ներկայացնելով «Կոնդ»-ը որպես կինոերևույթ՝ բարձրագույն պրոֆեսիոնալիզմով արված: Հաղորդումն ուղեկցվեց ֆիլմի ցուցադրմամբ:

- Կարելի է ասել՝ ստեղծագործական այդ շրջանը Ձեզ համար փորձի և փորձառության ձեռքբերման ժամանակահատվա՞ծ էր...

- Դա շատ կարևոր շրջան էր ինձ համար: Բայց քանի որ իմ կաղապարը, ցանկությունը և մտածելակերպը ռեժիսորական էր՝ փորձեցի ռեժիսորական բաժնում. սկսեցի ասիստենտի աշխատանքից... Հետո վերջապես առաջարկեցին մի քանի ֆիլմ նկարել. դրանք կինոժուռնալներ էին, և շատերը չէին ուզում նկարել, բայց ես սիրով նկարեցի 4 ֆիլմ: Դրանցից մեկը Շավարշ Կարապետյանի հերոսության, մյուսը՝ բռնցքամարտիկ Վլադիմիր Ենգիբարյանի մասին էր: Ֆիլմերը շատ լավ ընդունվեցին, Մոսկվայում նույնիսկ պրեմիերաներ արեցին: Իմ լավագույն ընկերներից մեկի՝ Ներսես Հովհաննիսյանի հետ էլ նկարեցինք ֆիլմ Միկոյանի անվան պարտիզանական ջոկատի մասին: Ես արդեն պատրաստ էի կյանք մտնելու. ես նկարեցի «Կոնդ» ֆիլմը, բայց որի գլխին այդպիսի փորձանք բերեցին... Դժվար ժամանակներ էին, շնորհալի մարդկանց ստեղծագործելու ազատություն չէին տալիս: Մարդիկ հասնում էին 50-60 տարեկան, նոր միայն փորձարարական մի ֆիլմ էին տալիս հոգնած ու հետաքրքրությունն արդեն կորցրած այդ մարդկանց...

Իսկապես կինո նկարելը շատ դժվար գործ էր. այն կապված էր մեծ ֆինանսների և արվեստի մի գործարանի հետ, որը կոչվում էր «Հայֆիլմ» կինոստուդիա: Բայց փառք Աստծո, հետո ղեկավար դարձավ Ֆրունզե Դովլաթյանը, որը հավատաց ինձ և վստահեց: Առաջին տարիներին ինձ շատ օգնեց նաև Միքայել Ստամբոլցյանը, նրա հետ սցենարներ էինք գրում... Իմ դասախոսը հետագայում դարձավ իմ ընկերը և իմ սցենարիստը:

Արդեն մեծ հաջողությունների էի հասել, բայց կային մարդիկ, որոնք շարունակում էին վատաբանել ինձ: Երբ Միքայել Ստամբոլցյանի և Սուսաննայի Հարությունյանի հետ ստեղծում էինք «Ոսկե ծիրան» փառատոնը, նրանք կասկածի տակ էին դնում Հայաստանում փառատոնի կարևորությունն ու անհրաժեշտությունը: Բայց փառատոնը հաջողություն ունեցավ:

-Ի՞նչ են Ձեզ համար և ընդհանրապես արվեստագետի համար կոչումներն ու պարգևները. ինչ-որ բան փոխո՞ւմ են արվեստագետի կյանքում:

-Շատերը ձևացնում են, թե դրանք կարևոր չեն և պետք չեն, բայց մրցանակները նրա համար են, որ ապացուցեն՝ դու իսկապես փորձառու ես քո ոլորտում: Իմ ընկերների մի մասը հիացած չէին իմ ֆիլմերով, նույնիսկ մի մեծ բանակ կար, որ խանգարում էր: Մարդիկ կային, որ մինչև 80-100 ֆիլմ էին նկարում, որոնցից մի քանիսն էին որակյալ, ես 15-16 ֆիլմ կարողացա նկարել, բայց որոնք միջազգային, համաշխարհային փառատոնների մասնակցեցին:

Դժբախտաբար արվեստագետների մեջ նախանձ կա: Եվ հատկապես կինոյում է դա նկատելի... Երբ խանգարում են քեզ և ուշ-ուշ ես նկարում. տարիներ ես կորցնում. ես 10 տարի ֆիլմ չնկարեցի «Կոնդ» և «Սպիտակ քաղաքը» ֆիլմերից հետո, որովհետև փող չկար, վերաբերմունք չկար: Ֆինանսավորում էին ժողովրդական և այլ կոչում ունեցող արտիստներին: Եվ դրա համար ես սիրով էի ընդունում այդ պարգևները և շնորհակալ էի բոլոր այն մարդկանց, որոնք ինձ տարբեր կոչումների ու պարգևների էին ներկայացնում:

«Գրականության և արվեստի ասպետ»՝ Ֆրանսիայի կառավարության բարձրագույն շքանշան, Լեհաստանի կառավարության մրցանակ, Հոլանդիայի թագավորական մրցանակ, բազմաթիվ այլ մրցանակներ ու մեդալներ ունեմ, որ պահում եմ իմ չիրկիզվող պահարանում, որոնք ցուցադրելու կարիք չունեմ...

-Ի վերջո, ի՞նչ է կինոյի աշխարհը Ձեզ համար: Կխոսե՞ք այն ֆիլմերի մասին, որոնք դեռ չեք նկարել...

-Կինոն կարևոր միջոց է՝ պատմելու իմ ներքին հոգեվիճակի, իմ պատմության ու նկատած թերությունների, իմ հայկականության ու անհանգստությունների մասին: Որովհետև այնքան անհանգստություններ ունեմ՝ կապված մեր երկրի ու ազգի հետ... Երազում եմ, որ մի օր բոլոր հայերը վերադառնան Հայաստան: Հիմա էլ են փախչում... Իմ ֆիլմերի կեսը նվիրված է այդ փախուստին: Ցավոք, այսօր կինոթատրոններում և հեռուստատեսությամբ ավելի շատ շահույթ հետապնդող ֆիլմեր են ցուցադրում:

-Ի՞նչ նոր ֆիլմեր եք ուզում նկարել:

- Տաղանդավոր հայերի ճակատագրերի մասին ֆիլմ եմ ուզում նկարել...

-Կա՞ն մտավախություններ, որ այդպես էլ չհաղթահարվեցին:

-Ես այդպես էլ ինքնավստահ չդարձա. միշտ վախենում եմ՝ արդյո՞ք լավ ստացվեց այս կամ այն ֆիլմը, արդյո՞ք դա պետք էր մարդկանց:

Ինձ համար շատ կարևոր է, որ այդ ֆիլմերը տարիներ հետո չհնանան, դիմանան ժամանակի քննությանը: Կարծում եմ՝ իմ ֆիլմերը կդիմանան ժամանակի քննությանը, որովհետև դրանք պատմում են մարդկանց և նրանց հույզերի մասին...

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Ուսանողներն այցելեցին ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտ

Առաջատար գիտաշխատող, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սարգիս Հայրոյանը ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտի Փորձարարական հետազոտությունների լաբորատորիայում ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի «Մաթեմատիկա-ֆիզիկա», «Մաթեմատիկա-ինֆորմատիկա» կրկնակի մասնագիտություններ սովորող ուսանողներին հանգամանորեն ծանոթացրեց կառույցի աշխատանքներին, խոսեց ՀՀ-ում կառուցվող ջրամբարների նախագծման և հաշվարկների հիմնական փուլերի, դրանց հիմնատակերի մոդելավորման և նյութերի ընտրության մոտեցումների մասին:

Քննարկումների ընթացքում նա պատասխանեց ուսանողներին հետաքրքրող հարցերին:

Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Լուսինե Ղուլղազարյանը կարևորեց կառույցի հետ համագործակցությունը և այն հուշագրով ամրագրումը. «Նման հանդիպումներն օգնում են ուսանողներին՝ իրենց ստացած գիտելիքները կիրառելու բնական երևույթները նկարագրող խնդիրների լուծման ընթացքում, ինչն էլ կնպաստի մանկավարժական գործունեության արդյունավետությանը ԲՏԵՄ ոլորտում»:

Հաջորդ այցին ուսանողները ներկա կգտնվեն նաև լաբորատորիայում կատարվող գիտափորձերին:

Վերապատրաստման դասընթացի եզրափակիչ ամփոփումը

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողները դեկտեմբերի 5-21-ը Մանկավարժական համալսարանում մասնակցել էին վերապատրաստման դասընթացների. Հունվարի 21-ին ակադեմիական 90 ժամ տևողությամբ դասընթացի 53 մասնակիցները հանդիսավոր պայմաններում հավաստագրեր ստացան:

Նրանց ողջունեց ՀՊՄՀ Ուսումնական գործընթացների գծով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը, որը փաստեց՝ նախադպրոցական ոլորտի մանկավարժական աշխատողները բարդ ու պատասխանատու աշխատանք են կատարում, հույս հայտնելով, որ կրթական բարեփոխումները պետք է ներառեն նաև այդ կարևոր ոլորտը:

«Համոզված եմ, որ վերապատրաստման գործընթացը նախադպրոցական հաստատության աշխատողներին նոր գիտելիքներ է տվել, թարմացրել նրանց աշխատանքային զինանոցը, որը արդյունավետորեն կիրառելու են իրենց բարդ ու պատասխանատու աշխատանքում»,-ասում է պրոռեկտորը:

Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչի պաշտոնակատար Արմենուհի Մանուկյանը հպարտությամբ բարձրաձայնում է՝ վերապատրաստվողների թիվը նկատելիորեն աճել է, ինչը վկայում է, որ մասնագիտական բարձր որակներ ունեցող թիմ է աշխատել և գործընթացը արդյունավետ իրականացրել:

«Գաղտնիք չէ, որ նախադպրոցական հաստատություններում նվիրյալներ են աշխատում»,-ասաց բանախոսը՝ վստահ, որ վերապատրաստումները նոր գիտելիքների ձեռքբերման, կարողությունների ու հմտությունների ձևավորման, հիմնախնդիրների բացահայտման ու փորձի փոխանակման մի իսկական հարթակ էր: Արմենուհի Մանուկյանը լիահույս է՝ վերապատրաստումներն ամեն անգամ նոր որակներ են արձանագրում, հաջորդաբար կատարելագործվում են անցկացման մեթոդները:

Ամբիոնի պրոֆեսոր Սվետլանա Մարությանը, որը ոլորտի ակունքներում է կանգնած, շնորհավորեց վերապատրաստված աշխատողներին՝ վերապատրաստման գործընթացին մաղթելով շարունակական ընթացք:

Մասնակիցներն իրենց գոհունակությունն արտահայտեցին՝ իսկապես մասնագիտական անհրաժեշտ գիտելիքներ ստացան, որը նորովի կօգտագործեն իրենց աշխատանքում:

«Ես սիրում եմ մանկավարժությունը, սիրում եմ երեխաներին»,- ասում է Լիանա ԱՌԱՔԵԼՅԱՆԸ

-Կներկայանա՞ք:

-Ես Առաքելյան Լիանան եմ, 22 տարեկան: 2020 թվականից սովորում եմ Մանկավարժական համալսարանի ինֆորմատիկայի բաժնի հեռակա ուսուցման համակարգում:

Ավարտել եմ Արագածոտնի մարզի Թալինի շրջանի Արագածավան գյուղի N 1 միջնակարգ դպրոցը: Ներկայում աշխատում եմ նույն դպրոցում՝ համատեղելով ուսումն ու աշխատանքը:

-Ինչո՞ւ ընտրեցիք այդ մասնագիտությունը, ինչո՞վ էր դա պայմանավորված:

-Հանգամանքների բերումով կրթություն եմ ստացել նաև Ռուսաստանի Դաշնությունում, և երբ վերադարձա Հայաստան՝ շատ էի ուզում մանկավարժ դառնալ: Մասնագիտության հարցում էլ ինձ կողմնորոշեց քույրս, ով մագիստրոսական կրթական ծրագրով՝ մաթեմատիկա մասնագիտությամբ, նույնպես սովորում է Մանկավարժականում:

Որպես ժամանակակից մասնագիտություն՝ ես էլ էի հակված մասնագիտանալ ինֆորմատիկայի գծով, թեև նախապես ընտրել էի հայոց լեզու և գրականություն:

-Որքանո՞վ արդարացան ակնկալիքներդ:

-Պետք է ասեմ, որ մեր դասախոսները տալիս են այն բոլոր գիտելիքները, որոնք պետք են մեզ ապագայում աշխատելու համար: Այո, ակնկալիքներս արդարացել են: Ես նաև հասկացա, որ ճիշտ մասնագիտություն եմ ընտրել: Զուգահեռ առցանց դասընթացների միջոցով ուսումնասիրեցի VEB ծրագրավորում:

-Ի՞նչ ես կարծում, մեր օրերում բոլո՞ր պետք է ժամանակակից մասնագիտություն ընտրեն, բա մյուս ոլորտնե՞րը:

-Այո, կարծում եմ սխալ է ընտրել միայն ժամանակակից մասնագիտություններ. չէ՞ որ երկրին տարբեր ոլորտների մասնագետներ են պետք... Մեր կուրսի օրինակով կասեմ՝ մեր կուրսից միայն ես եմ որոշել շարունակել մանկավարժի մասնագիտությամբ, մյուսները տեխնոլոգիաների ոլորտն են ընտրելու, որպեսզի ժամանակի հետ համահունչ քայլեն: Մեր կուրսից միայն ես եմ աշխատում մանկավարժի մասնագիտությամբ: Մյուսներն ընդունվել են՝ տեխնոլոգիաների մեջ հմտանալու համար:

Բայց հանրապետությանն այսօր շատ են պետք մանկավարժներ, և մանկավարժական բուհ ընդունվողների այս մոտեցումը ես սխալ եմ համարում:

-Քույրիկդ էլ է սովորում հեռակա համակարգում: Ի՞նչ ես կարծում՝ հեռակա կրթական ծրագիրը շա՞տ է տարբերվում առկա ուսուցման կրթական ծրագրից: Այսօր հին մոտեցումները չկան, կարծում եմ, հեռակայի հանդեպ: Յուրաքանչյուրն ըստ իր հարմարության է ընտրում՝ որ համակարգում սովորել, հետևաբար այսօր ուսուցման բոլոր ձևերն ընդունելի են:

- Ես տարբերություն չեմ տեսնում: Լավ դասախոսներ ունենք, որոնք նվիրումով աշխատում են, գիտելիքներ փոխանցում, այլ հարց է՝ ով ինչքան կվերցնի կամ ինչ ջանասիրությամբ կսովորի: Ամբիոնի բոլոր դասախոսներին սիրով ենք լսում՝ Ջանիբեկ Սրապիոնյանին, Արսեն Նադարյանին, մյուսներին: 5-րդ կուրսում արդեն ծանոթացել ենք Սամվել Միրզոյանին, և ուրախ ենք դրա համար:

Կուրսում 13 հոգի ենք: Ցավոք շատերը ընդունվելու միտում են ունեցել՝ հետագայում գումար վաստակելու ակնկալիքով:

-Ուսուցչին այսօր շատ քիչ են վճարում. դուք համոզված ե՞ք, որ շարունակելու եք աշխատել որպես ուսուցիչ:

-Այո, ես սիրում եմ մանկավարժի գործը, սիրում եմ երեխաներին կրթել, պետք է շարունակեմ, նաև մասնակցեմ կամավոր ատեստավորման՝ միգուցե ինչ-որ չափով բարձրացնեմ աշխատավարձս:

Դեռ 2020 թվականից աշխատում եմ «Արմատ» ինժեներական լաբորատորիայում, խմբավար եմ: Իսկապես ես իմ գործը շատ եմ սիրում:

-Այսօր ուսուցիչն այլևս միակ գիտելիք փոխանցողը չէ, հետևաբար պետք է կարողանալ ճիշտ ուղղորդումներ անել, որպեսզի սովորողը կողմնորոշվի, սխալներ չանի: Ո՞վ է մեր օրերի ուսուցիչը...

-Ուսուցիչը նաև հոգեբան է, պետք է կարողանա ճիշտ մոտենալ յուրաքանչյուր սովորողին, անմիջականորեն մասնակցել նրա մարդկային որակների ձևավորմանը, նրա մեջ արմատավորել արժեքներ հայրենիքի ու պետականության նկատմամբ, որպեսզի մեր երկրի ապագան լավ ու հզոր ձեռքերում լինի:

-Մտադրություն ունե՞ս շարունակել մագիստրատուրայում:

-Այո՛, և նույն մասնագիտությամբ:

-Ինչ կարող ես ասել քո մանկավարժական առօրյայի մասին:

-Արդեն չորս տարի աշխատում եմ «Արմատ»-ի խմբավար, և շատ հաճելի է, որ երեխաներն ինձ վերաբերվում են որպես ավագ ընկերոջ, ինձ հետ կիսում են իրենց խոհերը, չեն վախենում ինձ հետ խոսել կարևոր բաների մասին, խորհուրդ են հարցնում: Ես կարողանում եմ օգնել նրանց իմ խորհուրդներով:

-Մանկավարժությունը սովորական աշխատա՞նք է. թե առաքելություն ու կոչում:

-Ամենքը չէ, որ կարող են մանկավարժ լինել. մանկավարժի կոչումը բոլորին չէ տրված, և միայն գիտելիքներ փոխանցելով չես կարող լավ մանկավարժ լինել: Պետք է սիրես գործդ: Հատկապես այս տեխնոլոգիական դարում շատ դժվար է երեխաների հետ աշխատել: Տեխնոլոգիական դարը ուսուցչին նոր գործիքներ է տվել աշխատելու, բայց և ռիսկեր է պարունակում:

-Ի՞նչ կմաղթես բոլոր նրանց, ովքեր ընտրել են մանկավարժությունը կամ դեռ չեն կողմնորոշվել:

-Յուրաքանչյուր ոք պետք է հասկանա՝ իր կոչումը երեխաներին կրթե՞լն է, թե ոչ: Սխալ ընտրություն չանի և տարիներ վատնի:

-Պրակտիկայի ընթացքում են հիմնականում հասկանում՝ կարո՞ղ են ուսուցիչ աշխատել, թե ոչ:

-Այո: Մեր պրակտիկան անց ենք կացրել Լեոյի անվան N 65 դպրոցում, ընկեր Մերի Սիմոնյանի մոտ, ով Մանկավարժականի շրջանավարտ է: Նա մեզ շատ օգնեց, սովորեցրեց ինչպես աշխատել երեխաների հետ: Մենք կարողացանք մեր տեսական գիտելիքները հմտորեն օգտագործել պրակտիկայում:

Այս տարվանից արդեն ուսումնասիրում ենք թվային գրագիտություն և համակարգչային գիտություն: 2-րդ դասարանից ուսումնասիրում են դպրոցում: Մենք թվային դարում ենք ապրում, և այդ գիտելիքներն անհրաժեշտ են անշուշտ:

-Եթե նորից ընտրելու լինեիր՝ կրկին կընտրեի՞ր մանկավարժությունը:

-Անշուշտ:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Ճանաչելով սեփական պատմությունը

ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի սաներն ուսուցիչների և ծնողների հետ այցելեցին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի «Տապան» թանգարան: Ճանաչողական էքսկուրսիայի ընթացքում ներկաները դիտեցին ցուցահանդես, որտեղ ներկայացված էին հայոց բոլոր արքաները՝ սկսած Հայկազունների տոհմից:

Իրենց աշխատանքները հայ և ռուս նկարիչները միավորել էին «Վերածնունդ» խորագրի ներքո: Դպրոցի սաները մեծ կտավների վրա տեսան Հայկ Նահապետին և Արա Գեղեցիկին, Արտաշես Ի-ին և Տիգրան Մեծին, Տրդատ Մեծին և Գրիգոր Լուսավորչին, նրանց համար տպավորիչ էին նաև հայ առասպելների հերոսների նկարները:

Փառավոր էջը շարունակական էր: Հաջորդ բաց դասին աշակերտները տեղեկացան աշխարհով մեկ սփռված տաղանդաշատ հայ ազգի մի շարք ներկայացուցիչների մասին, որոնք մեծ ներդրում են ունեցել մարդկության զարգացման գործում՝ Լյութեր Սիմջյան (առաջին բանկոմատ ստեղծողը), Ռեյմոնդ Դամադյան (տոմոգրաֆիայի սարքավորման համահեղինակ), Ավետիս Զիլջյան («Zildjia» հանրա-

ճանաչ ընկերության հիմնադիր, ով ստեղծել է թմբուկի համար նախատեսված պարագաներ) և այլն:

Բնականաբար, նման բարձունքների կարելի է հասնել՝ ունենալով պատշաճ կրթություն: Այդ մասին խոսվեց Կրթության միջազգային օրվան նվիրված բաց դասին: Հրավիրված հյուրը Դիանա Գալստյանն էր՝ «Բոլշայա պերեմենա» համառուս-

տանյան երիտասարդական մրցույթի կրկնակի հաղթողը, ներկայում՝ տարածաշրջանային ծրագրերի համակարգողը: «Բոլշայա պերեմենա»-ն նաև նորարական կրթական համակարգ է, որի առաքելությունն է բարենպաստ պայմաններ ստեղծել ակտիվ և նպատակասլաց աշակերտների գիտելիքների դրսևորման համար: Ի դեպ, ծրագրին մասնակցում են նաև ՀՀ քաղաքացի հանդիսացող աշակերտները, որոնք ևս ամրագրել են իրենց հաջողությունները:

Կրթված մարդը նաև ռազմիկ է իր երկրի համար, քանզի գիտակցում է, որ հայրենիքը բացարձակ արժեք է: Այդ մասին խոսվեց Հայոց բանակի օրվան և Վարդանանց տոնին նվիրված բաց դասերին:

Այդ ամենը ներկայացվեց հայ մեծանուն գրողների պատմավեպերով. խոսվեց Դ. Դեմիրճյանի «Վարդանանք», Ռաֆֆու «Սամվել» և Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» մոնումենտալ ստեղծագործությունների մասին, որոնք տարբեր ժամանակներում պահել են հայ ժողովրդի անկոտրում ոգին:

Ամփոփելով մեր պապերի անցած ուղին և այն միահյուսելով նորարական կրթական մոտեցումների հետ՝ «Վերածնունդ» դպրոցի ուսումնական կոլեկտիվը՝ դպրոցի տնօրեն մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանի գլխավորությամբ, ջանք չի խնայում, որպեսզի հայրենիքից հեռու ապրող մոսկվայաբնակ աշակերտները լավ ճանաչեն սեփական պատմությունը, իմանան հերոսներին ու նրանց սխրագործությունները, գիտակցեն ու ապագայում ներդնեն իրենց հնարավորությունները ժամանակակից աշխարհում՝ ի բարօրություն մայր Հայաստանի:

«Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց
Մոսկվա

Նոր գիրք

Հրատարակվել է Աննա Սարգսյանի «Մտավորականը Զապել Եսայանի վիպագրության մեջ» մենագրությունը:

«Գիրքը նվիրված է 20-րդ դարի համարձակ և հայրենասեր կին գրող Զապել Եսայանի վիպագրությանը, այնտեղ պատկերված մտավորական կերպարների նորովի ուսումնասիրմանը: Սույն աշխատությամբ ներկայացվում են վիպագրության մեջ արծարծված գեղարվեստական իրողությունների պատմական հիմքերը, Զ. Եսայանի հայացքների ձևավորման և զարգացման ճանապարհը, ճշգրտվում են մտավորական- միջավայր փոխառնչությունների շուրջ գրողի դիտարկումները, տեսանելի դառնում հեղինակի ստեղծագործության մեջ ներկայացված հարցադրումների ու դիտարկումների արդիականությունը, նոր կողմերով է բացահայտվում Զապել Եսայանը, նրա ներաշխարհն ու հայրենասեր մտավորականի նկարագիրը»,-ներկայացված է գրքում:

«Աննա Սարգսյանին հաջողվել է գրողի կենսագրական հանգրվանների կողքին որսալ նաև թեմատիկ-գաղափարական շրջադարձերը, ինչը լավագույնս արտահայտվել է խորհրդային կարգերի հանդեպ վերաբերմունքի և երկվությունների սահմանների ճշգրտման խնդիրներում՝ բացահայտելով այն ներքին տառապանքը, որ ապրել է արվեստագետը և հատուցել ողբերգական իր մահով»,- «Երկու խոսք»-ի մեջ գրում է պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը:

Գիրքը նախատեսված է գրականագետների, գրականության տեսաբանների, ուսուցիչների, ուսանողների և ընթերցող լայն շրջանների համար:

Գ-իպական նոր հանդես՝ նվիրված պատմության ուսուցման հիմնախնդիրներին

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետի խորհրդի որոշմամբ հրատարակվել է «Պատմության ուսուցման հիմնախնդիրներ» գիտական հանդեսի 1-ին համարը: Այսուհետև այն լույս կտեսնի տարին երկու անգամ պարբերականությամբ:

«Հետազոտությունը իրականացվել է Պատմության և հասարակագիտության ֆակուլտետում, Հայաստանում և Սփյուռքում պատմության ուսուցման հիմնախնդիրները հետազոտող գիտական կենտրոնի կողմից: Նպատակն է ստեղծել մի գիտական հարթակ, որտեղ կլինի գիտական դիսկուրս՝ կապված պատմության դասավանդման հիմնախնդիրների հետ: Մենք գիտենք, որ շատ արդիական խնդիր է, և ոչ միայն. պատմության բնագավառն ուսումնասիրելը մեր առաքելությունն է: Անկախությունից ի վեր շատ բաներ արված չէին (կային առանձին աշխատանքներ), և պետք էր մի հարթակ ունենալ, որտեղ ուսուցման խնդիրները կբարձրացվեին, կքննարկվեին, կտեղայնացվեր համաշխարհային փորձը»,-ասում է ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը: Նա միաժամանակ հավելում է, որ այն շղթայի մի օղակն է, որ վերոհիշյալ թեմայով կազմակերպում են միջազգային գիտաժողովների շարք, որտեղ լսված զեկուցումների մի մասը տպագրվում է այդ հանդեսում: Պետք է արձանագրել, որ պարբերականում ընդգրկված են արտասահմանյան հեղինակների հոդվածներ, և հետագայում տարբեր տեխնիկական ու բովանդակային խնդիրներ լուծելուց հետո կարելի է հավակնել հանրապետական շրջանակներն ընդլայնել՝ պարբերականը դարձնելու միջազգային մակարդակի:

Դեկանը վստահեցնում է՝ այդ իմաստով պարբերականի ստեղծումը կարևոր ձեռքբերում է և պետք է առաջիկայում ապահովել հանդեսի պարբերականությունը, նաև այն ընդգրկել ԲՈԿ-ի կողմից ընդունելի գիտական հանդեսների ցանկում:

«Մերօրյա ժամանակներով պայմանավորված՝ մեր հասարակության վերափոխման գործընթացում կարևոր է պատմության ճիշտ ընկալումը, որը մեծապես պայմանավորված է ճիշտ դասավանդմամբ: Քանի որ թե՛ մեթոդական, թե՛ գաղափարական առումով վերափոխվելու անհրաժեշտություն կա, նպատակահարմար համարեցինք պատմության դասավանդման հիմնախնդիրներին վերաբերող որևէ պարբերական հրատարակել, որը կարող է մեծապես օգտակար լինել ոլորտի ուսուցիչներին»,- ասում է հանդեսի գլխավոր խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը:

Խ. Ստեփանյանը փաստում է՝ ներկա հանդեսում հրապարակվել են դասավանդմանը վերաբերող թե՛ մեթոդաբանական, թե՛ գաղափարախոսական հիմնախնդիրներ: Հանդեսը ստեղծվել է Հայաստանում և Սփյուռքում պատմության ուսուցման հետազոտական կենտրոնի ծրագրի շրջանակներում:

Հանդեսի խմբագրական խորհրդում են ՀՊՄՀ ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը (նախագահ), մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիամ Իսպիրյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիաննա Հարությունյանը, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Էդգար Հովհաննիսյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աիդա Թոփուզյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարություն Պապոյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հակոբ Թադևոսյանը, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մխիթար Գաբրիելյանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Անդրանիկ Դաքեսյանը (Լիբանան), պատմական գիտությունների դոկտոր Խաչիկ Մուրադյանը (ԱՄՆ), պատմական գիտությունների դոկտոր Բալինտ Կովաչը (Հունգարիա), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Իգոր Կրյուչկովը (ՌԴ):

Անդրանիկ համարում տպագրվել են Նաիրա Երկանյանի, Արմինե Եփրիկյանի, Խաչիկ Խամիսյանի, Աննա Թորոսյանի, Հովհաննես Խորիկյանի, Գագիկ Համբարյանի, Մարինե Կիրակոսյանի, Միքայել Մարտիրոսյանի, Հարություն Պապոյանի, Սեդա Քոչարյանի հոդվածները, որոնցում լայնորեն լուսաբանվել են պատմության ուսուցման ու դասավանդման արդի հիմնախնդիրները:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԶՄԵՌԱՅԻՆ ՀԱՆԳԻՍՏԸ ԱՂԱՎՆԱԾՈՐՈՒՄ

ՀՊՄՀ 10 ֆակուլտետներից 7-ական ուսանող, ընդհանուր առմամբ՝ 70 ուսանող, հնգօրյա ձմեռային հանգիստն անցկացրեց համալսարանի Աղավնաձորի հանգստի կենտրոնում: Հագեցած ծրագրով անցկացվող առօրյան ուսանողներին տալիս է ակտիվ ժամանց և ուսումնաճանաչողական հանդիպումներ, ասել է թե ուսանողները ակտիվ հանգիստը զուգադրում են ոչ ֆորմալ կրթությանը:

«Մեզ այցելության են գալիս տարբեր ոլորտների ներկայացուցիչներ, որոնք ուսանողներին են ներկայացնում իրենց մասնագիտությունների առանձնահատկություններն ու կիսում փորձը»,-ասում է ՈՒԽ նախագահ Պարույր Գալստյանը:

Աղավնաձորում հանգստանում են բարձր առաջադիմությամբ և հասարակական ակտիվությամբ աչքի ընկնող, նաև պատերազմին մասնակցած ուսանողները: Հետաքրքիր առօրյան ոգեշնչում է հանգստացող ուսանողներին, բուհի ուսանողական ակտիվն էլ հոգում է, որ նրանց առօրյան հավուր պատշաճի կազմակերպվի:

Ուսանողները հանդիպումներ են ունեցել էթիկայի դպրոցի տնօրեն Գևորգ Մկրտչյանի, ծանրամարտի աշխարհի չեմպիոն Նազիկ Ավդալյանի, «Դասավանդիր Հայաստան»-ի ներկայացուցիչների, բուհի արհմիութենական կազմակերպության ղեկավար Էդիկ Գուլյանի հետ: Ինտելեկտուալ և մարզական խաղերը փոխլրացնում են միմյանց՝ ակտիվ ժամանցը դարձնում առավել հետաքրքիր:

Պարույր Գալստյանը փաստում է՝ հանգիստը նաև ճանաչողական է, բացահայտում են տաղանդավոր ուսանողների, միմյանց հետ շփումներում ուսանողները ձեռք են բերում նոր ընկերներ:

Ուսանողական խորհրդի նախագահը հանդիպումներ է ունենում յուրաքանչյուր ֆակուլտետից ընտրված ուսանողների հետ, լսում նրանց առաջարկությունները, որոնք օգնում են տարեցտարի առավել հետաքրքիր դարձնել ձմեռային հանգստի կազմակերպման ծրագիրը:

Փետրվարի 3-ին Աղավնաձորում հանգստացող ուսանողներին այցելեց ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը: Ակտիվ երկխոսության ընթացքում ուսանողները բարձրացրին ուսումնական գործընթացին վերաբերող հարցեր և ստացան սպառիչ պատասխաններ:

Կուլտուրայի ֆակուլտետի լրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանող Սիմոն Հովհաննիսյանն առաջին անգամ է այստեղ: Փորձում է լրագրողի աչքերով չնայել. բավականին գոհ է, ասում է՝ հագեցած օրեր են անցկացնում՝ ժամանցային, իտելեկտուալ և այլ մրցույթներով, հետաքրքիր հանդիպումներով ու քննարկումներով: Ազատ ժամանակն էլ օգտագործում են իրար հետ շփվելու, իրար ավելի լավ ճանաչելու համար, ինչը շատ կարևոր է ուսանողական հարաբերություններում: Իրարից հեռու գտնվող համալսարանական մասնաշենքերում ուսանելը երբեմն այդ հնարավորությունը չի տալիս:

«Ուսանողները շատ ակտիվ են: Օրինակ, քիչ առաջ կինոյին նվիրված ինտելեկտուալ խաղ-մրցույթ էր, ուր ներկայացնում էինք կինոյի վերաբերյալ մեր գիտելիքները: Պետք է ասել, որ բոլորը մասնակցում էին, թեժ մրցակցությամբ անցավ, հետաքրքիր էր: Իսկ երեկոյան պարում ենք, սեղանի խաղեր խաղում...»,-ասաց Սիմոնը:

«Մեր հնարավորության սահմաններում ամեն ինչ անում ենք, որպեսզի դուք լավ ճանաչեք միմյանց և ինքներդ ձեզ»,- ուսանողների հետ հանդիպմանն ասաց պրոռեկտորը:

Ուսանողների հարցերը վերաբերում էին կրթության մերօրյա մարտահրավերներին, բուհի կողմից միջազգային ծրագրերի իրականացմանը, ուսանողների համար Ակադեմիական քաղաքի ռիսկերին, մարզերի բուհերի ճակատագրին, ուսումնական գործընթացի կազմակերպմանը, նորագույն տեխնոլոգիաների սղությանը, կրթության համատեքստում «հայրենասիրություն» հասկացության արմատավորմանը:

Մ. Հարությունյանը խոսեց մի շարք խնդրահարույց հարցերի, այդ թվում՝ անգլերենի չիմացության պատճառով միջազգային մի շարք ծրագրերում ուսանողների և դասախոսների ցածր դիմելիության մասին: Պրոռեկտորը փաստեց՝ Մանկավարժականը «Ամառային դպրոց»-ի կազմակերպման հրաշալի փորձ ունի, վստահեցրեց՝ կրթության առաջին մարտահրավերը 21-րդ դարի հմտություններն են, որոնց պետք է տիրապետել, պետք է փոխել կրթական համակարգը, բարձրացնել ուսուցչի արժեհամակարգը, և դա անելու է այս սերունդը:

Ուսանողների հարցերին պատասխանելիս պրոռեկտորը խոսեց միջֆակուլտետային նախագծերի իրականացման անհրաժեշտության, ակադեմիական քաղաքի հնարավոր ռիսկերի, գործող օրենքների շրջանակում բուհական առարկայական ծրագրերի նորացման, լոգոպեդների պրակտիկաների և այլ խնդիրների շուրջ:

Ուսումնական գործընթացներին վերաբերող հարցերին պատասխանեց նաև համալսարանի Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ Սամվել Ասատրյանը:

Պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը վստահեցրեց՝ մտածողության փոփոխություն է պետք, դուք ձեր օրինակով պետք է կոտրեք կարծրատիպերը, ապա ամփոփեց՝ ուսուցիչն այսօր ամենակարևոր մարդն է, նա կրթում է սերունդներ, և մանկավարժները, անկախ մասնագիտությունից, պետք է իրենց ամենօրյա աշխատանքով հայրենասիրության օրինակներ տան:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Հայաստանի առաջին դրամների օրինակները և Ցարական ժամանակների դրամապրեղծումը (1917 թ.)

Սկիզբը նախորդ համարում

III դարի **կեսերից Հայաստանում սկսում են շրջանառվել Սասանյան Իրանի, իսկ V դարի վերջից՝ նաև Բյուզանդական կայսրության դրամները:**

Շապուհ 1-ի շրջանի մետաղադրամ:

VII դարի **երկրորդ կեսին Արաբական խալիֆայության կողմից Հայաստանի նվաճումից հետո դրամաշրջանառությունը Հայաստանում կատարվել է Օմայանների տոհմի, իսկ ավելի ուշ՝ Աբբասյանների դրամներով: Արաբական խալիֆայության դրամներից Հայաստանում շրջանառվել են արծաթե դիրհեմներ, պղնձե ֆելսեր և, շատ սահմանափակ քանակով, ոսկե դինարներ:**

X դարի վերջից արաբական արծաթե դիրհեմներին փոխարինում են բյուզանդական ոսկե դրամները և պղնձե ֆոլիսները, որոնք տարածաշրջանում կատարում էին հիմնական դրամական միավորի դեր: XI-XII դարերում շրջանառության մեջ սկսում են թափանցել նաև սելջուկյան և այլ տեղական մահմեդական տիրակալների մետաղադրամները:

Սալահ ադ Դինը՝ պատկերված դիրհեմ մետաղադրամի վրա, մոտ 1190 թվական:

Բագրատունյաց **թագավորության ժամանակաշրջանում (885-1045 թթ.) դրամներ չեն հատվել, սակայն Տաշիր-Չորագետի փոքրիկ թագավորությունում, որտեղ իշխում էր Բագրատունիների ճյուղերից մեկը, Կյուրիկե Բ արքայի օրոք (1048-1089 թթ.) թողարկվել են պղնձե դրամներ՝ բյուզանդական պղնձե ֆոլիսների նմանությամբ, բայց հայ թագավորի անվան հիշատակությամբ: Սրանք մեզ հայտնի առաջին հայատառ դրամներն են:**

Նկ. 10. Տաշիր-Չորագետի հայկական թագավորություն, Կյուրիկե Բ, 1048-1089 թթ., պղնձե դրամ

Դիմերես՝ **Քրիստոսի կիսանդրին՝ ավետարանը ձեռքին, հայերեն մակագրություն՝ ՅՍ-ՔՍ (Հիսուս Քրիստոս):**

Դարձերես՝ **հայերեն մակագրություն՝ «+ՏՐ ՕԳՆԷ ԿՈՐԻԿԷԻ ԿՈՐԱՊԱՂԱՏԻՆ» (Տեր օգնիր Կյուրիկե Կյուրոպաղատին):**

XI դարի վերջին **Կիլիկիայում հիմնվեց Հայոց պետություն, որը գոյատևեց շուրջ երեք հարյուր տարի (1080-1375 թթ.): Իշխանապետության շրջանում (1080-1198 թթ.) Ռուբինյան իշխաններից ոմանք թողարկել են պղնձե դրամներ, որոնք կրում էին խաչակրաց դրամների պատկերագրության ազդեցությունը, բայց ունեին հայերեն գրություններ: Թագավորության շրջանում (1198-1375 թթ.), արքա**

Նկ. 11. Կիլիկիայի հայոց թագավորություն, Լևոն Ա, 1198-1219 թթ., արծաթե դրամ

Կիլիկիայի հայոց թագավորություն, Լևոն Ա, արծաթե դրամ

Լևոն Ա-ից (1198-1219 թթ.) սկսած, առատորեն թողարկվել են արծաթե և պղնձե, երբեմն՝ բիլոնե (արծաթի ցածր պարունակությամբ համաձուլվածք) դրամներ:

Արծաթե դրամները կոչվել են «դրամ», «թագվորին», իսկ պղնձե դրամները՝ «դանգ», «քարտեզ», «փող»: Կիլիկյան դրամները բնորոշվում են հայկական, եվրոպական և արևելյան տարրերից հյուսված ինքնատիպ պատկերագրությամբ և հայերեն գրություններով: Դրանք բոլորը խաչազարդ են:

Դիմերես՝ Լևոն Ա թագավորը առյուծազարդ գահին նստած, հայերեն մակագրություն՝ «+ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՑ» (Լևոն թագավոր հայոց):

Դարձերես՝ **խաչ երկու առյուծների միջև. հայերեն մակագրություն՝ «+ԿԱՐՈՂՈՒԹԲՆ ԱՍՏՈԾՈՅ» (Կարողությամբ Աստծո):**

XIII դարի սկզբից **Հայաստանի հյուսիսում և արևելքում շրջանառվել են**

Գրված է՝ Լևոն թագավոր ամենյան Հայոց: Կարողութենա Աստծոյ:

վրաց թագավորների, հիմնականում՝ Թամար թագուհու, պղնձե դրամները:

XIII դարի կեսից **սկսած՝ Հայաստանի դրամաշրջանառության մեջ գերիշխող են դառնում մոնղոլական տիրակալների դրամները՝ արծաթե դիրհեմներն ու սակավաթիվ պղնձե ֆելսերը: Հետագայում դրամական գործարքները Հայաստանում սպասարկվում էին տեղական մահմեդական տոհմերի դրամներով:**

XVI դարից մինչև 1820-ական թթ. **Հայաստանի արևելյան մասում դրամաշրջանառությունը կատարվել է հիմնականում իրանական շահերի դրամներով: Ինչպես Իրանի բազմաթիվ քաղաքներում, XVI-XVIII դարերում Երևանում նույնպես թողարկվել են պղնձե, արծաթե և ոսկե դրամներ:**

1828 թ. **Արևելյան Հայաստանը Ռուսական կայսրության կազմում ընդգրկվելուց հետո Հայաստանում շրջանառության մեջ են մտնում ռուսական ոսկե, արծաթե և պղնձե դրամական թողարկումները: Առաջին անգամ սկսում են շրջանառվել Ռուսական կայսրության թղթադրամները, իսկ փետրվարյան հեղափոխությունից հետո (1917 թ.)՝ նաև Ռուսաստանի ժամանակավոր կառավարության թողարկումները:**

Արամ ՀԱՄԲԱՐՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու
Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի դոցենտ

Հայ պարարվեստի թանգարանում

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի 7-9-րդ դասարանի աշակերտները Մանկավարժական համալսարանում էին: Այցի նպատակն էր ծանոթանալ Կուլտուրայի ֆակուլտետի Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախասրահում տեղակայված Հայ պարարվեստի պատմության բացառիկ թանգարանին:

Ամբիոնի դասախոսներ Տաթևիկ Նիկոյանը, Թագուհի Զաքարյանն ու Արևիկ Գյուլումյանն աշակերտներին ներկայացրին թանգարանի 4 սրահում ցուցադրված պարարվեստի, ինագիտության և տարազագիտության պատմությունը: Այցելուները դիտեցին պարային ծիսական արարողություններին վերաբերող իրերը, ծանոթացան նյութերի, թանգարանային նմուշների՝ նախաքրիստոնեական շրջանից մինչև մեր օրեր:

Նշենք, որ Հայ պարարվեստի պատմության թանգարանը յուրատեսակ է իր բովանդակությամբ և նշանակությամբ, միակն է Հայաստանում:

Կատարված հսկայածավալ պատմագիտական, ինագիտական, տարազագիտական և պարագիտական աշխատանքները միտված են բարձրացնելու պարարվեստով զբաղվողների կրթական մակարդակը, հարստացնելու նրանց ճանաչողական գիտելիքներն ու ընդլայնելու պարագիտական ուսումնասիրությունները, ինչն էլ փաստեցին թանգարանի կրտսեր այցելուները:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ